

4467

ՈՐՍԻ ԳՆ ԳԱԿ

(ՕԱՏՐՈՒԹՈՒԿԱՐ ԺՈՂՈՎՐԴՈՒԹՅՈՒՆ)

Թարգմանեց
Ցիրուկի Կոստանեանց

Թ. Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Մ Հարածէի, Նիկ. Փ. առ. 21
1894

891-71

0-71

Ենր շաբաթից մարտի թիւ

891.71-3

Օ-71

ԱԿ.

ՈԲՍԻ ԳԵՂԱԳՆ

բայց անըլ:

(ՕՍՏՐՈԳՈՐՎԱՆԻ ԺՈՂՈՎԸՆԻՒԹԻՑ)

Թարգմանեց

Տիրուհի Կոստանեանց

1002
6939

8



Տ Փ Խ Ւ

Ձպ. Մր. Յարշակի. || Տիպ. Մ. Շարաձե.

1894

2003

2011

Պ Ր Ո Ւ Ք Ն Դ Ա Կ

Дозволено ценз. Тифлисъ, 29-го Апрѣля 1894 г.



Եր կողմերում ֆը-
 րանկը համարվում
 Եր ամենալաւ որ-
 սորդ: Նա արդէն
 50 տարեկան Եր,
 բայց երիտասարդ
 որսորդներից ոչ
 մէկը չէր կարող մըցել նո-
 րա հետ: Նա որսի ժամա-
 նակ չէր լոգնում շուտով և համարեա
 միշտ նորան յաջողվում էր որսին խփել:
 Նա լաւ, սուր աչք ունէր և միշտ հան-
 գիստ էր ու չէր յուզվում: Որսորդի հա-
 մար այդ յատկութիւնները շատ թանգ

Են: Նորա հետ որսի գնալը մեծ բաւա-
կանութիւն էր: Նա ագահ չէր, չէր աշ-
խատում շատ որս խփել և եթէ տեսնէր
որ իւր ընկերներից մէկը պատրաստվում
է մի գազանի խփել, նա հանգիստ սըր-
տով թողնում էր, որ ընկերն էլ այդ
պատուին արժանանայ: Իսկ ինքը միայն
այն ժամանակ էր որսի ետևից ընկնում,
երբ նկատում էր, որ ընկերները չեն
տեսնում գազանին, կամ թէ չեն կամե-
նում խփել: Բայց ամենից շատ Փրանկն
ինձ դուր էր գալիս այն պատճառով, որ
նա որսի ժամանակ միշտ իրան հանգիստ
պահելով, անդադար հսկում էր ամեն
բանին, ինչ որ կատարվում էր իւր շուր-
ջը: Ես քանի անդամ նորա հետ որսի
եմ գնացել և միշտ էլ հիացել եմ նո-
րա վերայ: Նա երբէք չէր իրար անցնում և
չէր յուզվում որսի ժամանակ և մարդ
նորա հետ կարող էր բոլորովին հանգիստ
լինել, գիտենալով որ նա ամեն նախա-
գգուշութիւն գործ է դրել և թէ ոչ մի

գյըախտութիւն չի կարող պատահել,
որտեղ որ նա կայ: Մէկ անգամ, երբ
մենք երկուսով մենակ մնացինք և վը-
ռուեցինք խոտի վերայ հանգստանալու,
ես ասացի նորան՝ թէ շատ նախանձում
եմ, որ դուք այդպէս հանգիստ ու ան-
վրդով բնաւորութիւն ունէք: «Ի՞նչ կեր-
պով էք դուք ձեռք բերել այդ հանգս-
տութիւնը». Հարցը ես նորան: «Ես ին-
քըս էլ որսորդ եմ, գիտեմ թէ որսի ժա-
մանակ որչափ հանգստութիւն և ուշա-
դրութիւն է հարկաւոր: Ամեն անգամ,
երբ ես գնում եմ որսի, ինձ խօսք եմ
տալիս չտաքանալ ու չյուզուել, բայց
էլի միշտ հազար տեսակ լիմարութիւն-
ներ եմ անում: Խնդրեմ ինձ սովորեց-
նէք, թէ արդեօք դուք ինչպէս էք ձեզ
հանգիստ պահում, երբ բոլոր միւս որ-
սորդներն իրար են անցնում և գլուխ-
ները կորցնում են շփոթուելուց:»

Նա ժայռալով ձեռքը տարաւ դէպի
փողակապը և նորա վրայից հանեց մի

Քորոց փոքրիկ, մոխրագոյն գլխով:

Ա՞յլ թէ ինչը, սկսեց նա, ինձ լիշեցնում
է, որ պէտք է սառնասիրտ... լինել որ-
սի ժամանակ: Ես էլ այնպէս անհամբեր-
որսորդ կըլինէի, ինչպէս և իմ ընկեր-
ներս, եթէ մէկ դէպք ինձ լաւ խրատ
չլինէր: Բայց այդպիսի դէպք ես ոչ ոքի
չէի ցանկանար: Մէկ ամսում իմ բնաւո-
նութիւնս փոխուեց և այդ անմոռանալի
խրատի հետքերը մնացին իմ ամբողջ
կեանքումս: Կամենում էք ես ձեզ պատ-
մեմ այդ դէպքի մասին»:

Ահա նորա պատմութիւնը.

Իմ հայրս նոյնպէս որսորդ էր: Երբ
ես պէտք է երկրորդից երրորդ դասա-
տունը փոխուէի, հայրս խոստացաւ ինձ
հրացան ընծայել: Ես քննութիւնս լաւ
բռնեցի և հրացանն ստացավ: Կարող էք
իմ ուրախութիւնս երեակայել, երբ ես
իմ սեփհական հրացանս սւնեցալ: Մեր
կողմերում, սիրուն ելզասում, երեխանե-
րը շուտով ցանկութիւն են զգում որ-

սորդ լինելու, որովհետև նոքա շտա շուտ
շուտ տեսնում են իրանց մեծերին ան-
տառներում որսի գնալիս: Ես նոյնպէս,
ինչպէս և իմ միւս ընկերներս, շատ անգամ
պարծեցել եմ իմ որսորդական պայու-
սակովս, վազվակել եմ որսի ետևից և այլն:
Ես արդէն իմ հրացանս ունէի և այդ թէ
իմ և թէ ընկերներիս առաջ պատիւս
բարձրացնում էր: Հօրս ընծայած հրացա-
նով կարծես ես մեծ մարդ դարձալ:

Բայց ափսոս որ ես օրէնքով դեռ
իրաւունք չունէի որս անելու և իմ բա-
ւականութեանս համար ես՝ կարող էի
հրացան արձակել միայն մեր պարտէզում,
իսկ այնտեղ էլ միայն ծտեր կային, որոնց
սպանել հայրս թոյլ չէր տալիս, որովհետև
նոքա պարտիզին օգուտ էին բերում. ո-
չընչացնելով զանազան վնասակար մի-
ջատներին: Բացի այդ, պարտէզում հրա-
ցան արձակելով, ես կարող էի յանկարծ
իմ փոքրիկ եղբայրներիս ու քոյրերիս
մէկն ու մէկին խփել որովհետև նոքա

առաւօտից մինչև երեկոյ խաղում էին
այնտեղ:

Ալգալէս ուրեմն, իմ հրացանս ան-
օգուտ պիտի պատից կախուած մնար, ե-
թէ որ հայրս չխղճար ինձ՝ «Վաղ թէ
ուշ դու պէտք է հրացան արձակել սո-
վորես. կարծում եմ, որ ոչ մի պատճառ
չկայ, արձակուրդներին կարելի է սկսել:
Մենք քաղաք կերթանք, ես այնտեղ գործ
ունեմ. իսկ վերադարձին կը ժանենք իմ
մէկ ընկերոջս անտառը, որտեղ ես իրա-
ւունք եմ ստացել որս անելու. կըխփենք
մի ճագար: Հետդ առ երկու շուն»:

Ի հարկէ, ես մի ըոպէում հօրս
հրամանը կատարեցի և մենք ճանապարհ
ընկանք: Բայց Աստուած իմ, ինչպէս եր-
կար էր երեսում ինձ այդ ճանապարհը:
Ի՞նչպէս ես բարկանում էի գրագրի վե-
րայ, որ շատ կամաց էր գրում հօրս հար-
կաւոր թղթերը: Ինձ բոլոր ժամանակ
թւում էր, թէ մենք մինչև գիշեր մեր
գործը չենք պըծնի և ստիպուած կըլի-

նինք որսի գնալն ետ ձգել մինչև միւս
օրը:

Վերջապէս ամեն բան վերջացաւ և
մենք իրիկուալ հինգ ժամին մեր տե-
ղումն էինք: Ես իմ ձիս կապեցի ծառից,
հայրս մեր հրացանները լցրեց հանդիսա
կերպով, ինչպէս որ միշտ, առանց շտա-
պելու, զգուշութեամբ և ապա բաց թու-
ղեց շներին: Յետոյ նա ցոյց տուեց տե-
ղը, հրամայեց ինձ նայել ճանապարհի
վերայ ու արձակել այն ժամանակ միայն,
երբ ճագարն երևի և ասաց որ, մինչև
շները չմօտենան, բաց չժողնեմ հրացա-
նի բերանը. իսկ գլխաւորը, որ տե-
ղից չշարժուեմ, մինչև որ ինքն իմաց
չտայ ինձ. և էլի մի քանի խրատներ
տալով, նա հեռու գնաց և կանգնեց:
Երեք բոպէից լետոյ լսուեց շների հա-
շոցը և ապա ինձանից տասը քայլ հե-
ռու երևաց մէկ շատ մեծ ճագար. թեթև
ոստիւնով նա թռաւ և կարողացաւ ին-
ձանից բաւական հեռու փախչել. շները

նորա ետևից վազեցին, իսկ ես դեռ չեմ
պատրաստվում խփելու։ Ես ամաչում էի,
որ այդպէս զուարել էի և եթէ այն ժա-
մանակ մէկն ինձ հարցնէր, թէ «ինչո՞ւ
չես արձակում» ճշմարիտ, ես նորան կը
հաւատացնէի, որ ոչինչ չեմ տեսնում։
Ամաչելով ու տեղիցս չհեռանալով, ես
կանգնած մնացել էի. բայց շների հա-
չոցն ինձ ուշքի բերեց։ Ճագարն ետ ե-
կաւ և վազեց աւելի աջ քան առաջին
անգամ։ Ես էլ վազեցի դէպի այն կողմը։
Ճագարն ինձ նկատեց և էլի ընկաւ ա-
ռաջուայ ճանապարհի վերայ. ես հետե-
ւում էի նորան բոլոր մացառների ու
թփերի միջից, աչքիցս չփախցնելով նո-
րան։ Ես այդ ժամանակ կարծես էլ ո-
չինչ չեմ տեսնում բացի փախչող որսից։
Ահա նա կանգնեց. ես իսկոյն կռացայ և
հրացանս արձակեցի. ճագարն սպանուած
էր։ Ալդ ըոպէին միայն ես նկատեցի հօրս.
Նա կանգնած էր ծառի մօտ, վեց քայլ
հեռու ինձանից և ճագարն իմ արձակե-

լուցս յետոյ, վերջին ոստիւնն անելով,
փոռւեց հօրս ոտքերի առաջ։

Ուղիղն ասած, իմ ուրախութիւնս
այնքան մեծ էր, որ ես չիշեցի, թէ հայրս
ինձ պատուիրեց տեղիցս չհեռանալ։ Հի-
անալով իմ յաղթութեամբս, ես վազեցի
ճագարի մօտ, բարձրացրի նորան գետ-
նից և հօրս ցոյց տալով, ուրախ ուրախ
ասացի. «տե՛ս, հայրիկ ջան, ինչպէս էր,
յաջող էր իմ առաջին որսը։»

«Որսի ժամանակ, եղբայր, բաւական
չէ միայն լաւ նշան առնելն, այլ պէտք
է և լսել նորան, ով որ կարգադրում է»,
Այս խօսքերի ժամանակ նա տիսուր կեր-
պով ժպտաց։ «Եթէ դու քո տեղումդ
կանգնած մնալիր. այն ժամանակ փոք-
րիկ գնդակը իմ ոտքս չէր մտնի։»

Բայց յոյս ունեմ, որ այդ չէ պա-
տահել։

Ո՛չ, ո՛չ. բայց դու այնուամենալ-
նիւ ուրիշ անգամ աւելի համբերող ե-
ղեր...

Նորա երեսը սովորականից աւելի գունատ երևաց ինձ։ Կռանալով, ես փոքրիկ ծակեր նկատեցի նորա անդրավարտիքի վերայ։ «Աստուած իմ, բայց ականչեցի ես. մի՛թէ ոտքիդ եմ խփել տես, քո անդրավարտիքդ կլոր կլոր ծակուել է....»

Ոչ, այդ ծակերն առաջ էլ կային, Տես, քո շորդ էլ պատռտել ես, երևի մացառների միջից վագելիս է պատահել։

Յիրաւի, ամբողջ շորս պատռտուած էր։ Ես հանգստացաւ և նկատելով որ մեր շներն արդէն ճագարի հետ գործը վերջացրել են և սպասում են միտյն հրամանի, ոյ նորից որս վնտուն, ես նոյնպէս ցանկութիւն ունէի շարունակել և նորից հրացանը ձեռքս առայ։ Բայց երեսում էր, որ հայրս էլ միտք չունէր մնալու։

«Գնանք, այսօր այսքանը բաւական է, ասաց նա. այս օրերս ես յոյս ունեմ, որ նորից այստեղ որսի կըդանք»։

Նա կանչեց շներին և գնաց նսաաւ մեր կառքը. նա գնալիս բոլորովին չէր կաղում, իսկ երբ մենք տուն հասանք և կառքից դուրս եկանք, ես նկատեցի, որ նա դժուարութեամբ քարշ էր տալիս իւր մէկ ոտքը։ Ցաւում է, հարցը ես նորան, բայց նա չպատասխանեց և կարծես սառը կերպով ասաց, որ ես հրացանը տանեմ տեղը դնեմ, իսկ ինքը ծանր քայլերով գնաց իւր սենեակը։

Եղբայրներս և քոյլերս դուրս պլըռծան պարտէզից և ես գիտեմ, թէ ո՞ր չափ կըպարծենայի իմ առաջին յաջող որս սովոր սոցա մօտ, եթէ որ հոգս չունենալի։ Ես շատ էի ուզում իմանալ, թէ հայրս թնչպէս է և փոքրիկների հետ խօսելով, աշխատում էի ոչ մի խօսք բերանիցս չժռցնել այդ մասին։ Ես տեսալ, որ մեր աղախինը շտապ շտապ գնաց մի ինչ որ տեղ, լետոյ բժիշկն եկաւ և մեզ չնկատելով անցաւ, գնաց ուղղակի հօրս սենեակը. նա ալնտեղ մինչև ուշ գիշեր

մնաց և երեի այն ժամանակ գնաց, երբ
մենք ընթրիք էինք անում: Մայրս մեզ
կետ ընթրիքի նստաւ, նա առաջ էլ միշտ
քիչ խօսող էր, բայց այս անգամ երեւում
էր, որ մէկ բան նորան հոգս է պատ-
ճառում: «Հայրիկը նստել չի ուզում, ա-
սաց նա մեզ. նա դադրել է շատ և բա-
ցի ալդ ոտքումը ոսկրացաւ է զգում.
Երեք, չորս օր նա պէտք է անկողնումը
պառկի. բայց ալդ ոչինչ, կանցնի... Ընթ-
րիքից յետոյ գնացէք նորան բարի գիշեր
ասացէք...»:

Իմ ախորժակս անցաւ և ես ակա-
մալ էի ուտում և աչքի տակով նայում
էի մօրս, որի երեսի վերայ վախում էի
յանդիմանութիւն տեսնել. բայց ալդ-
պիսի բան չէր երեւում նորա աչքերի մէջ:
Նա նոյնպէս չէր ուտում և կարծես ան-
համբեր սպասում էր, թէ ե՞րբ կուտէ՛կը
պրծնի փոքրիկ եղբայրս: Յետոյ նա սե-
ղանից վեր կացաւ, պատուիրեց մեզ սպա-
սել, մինչև որ հօրս սենեակը կարգի բե-

ըէ: Մի քանի ըոպէից յետոյ նա մեզ ներս
կանչեց:

Հայրս մէջքի վերայ պառկած էր.
նորա գլխի տակը շատ բարձեր էին դրել:
Ամենից առաջ ես մօտեցալ նորան և
համբուրելով ու հազիւ արտասուքներս
բռնելով, կարողացալ շշնչալ միայն.

«Հայրիկ ջան, խնդրեմ ինձ ասես,
դու թմ պատճառով ես հիւանդ:

«Հանգստացի՛ր. դու լաւ տղայ ես.
պատասխանեց հայրս և ես քեզ շատ եմ
սիրում. ահա բոլորն, ինչ որ ես քեզ կա-
րող եմ ասել:

Եղբայրս և քոլրիկներս այդ ժամա-
նակ արդէն նորա մահճակալի վերայ
թաւալվում էին, ինչպէս որ միշտ ամեն
առաւօտ, երբ գալիս էին հայրիկիս բա-
րի լոյս ասելու, իրանց գիշերուայ շա-
պիկներով: «Զգո՞ւ, ճշաց նա. այսօր իմ
ոտքս ցաւում է...»

Ես չէի հաւատում, որ նա ոսկրա-
ցաւով է հիւանդ. նա երբէք չէր գան-

գատվում, որ ոտքի ցաւ ունի և յանկարծ այս օրուան որսորդութիւնից յետոյ առաջ եկաւ: Ես աչքերս ալս ու այն կողմը գցեցի, որ սենեակում մէկ որևէ բան գտնեմ, որից կարելի լինի ճշմարտութիւնն իմանալ և Աստուած իմ, յանկարծ նկատեցի հօրս անդրավարտիքը, որ կախուած էր պատուհանի կողքից և ինձ այնպէս երևաց, որ անդրավարտիքի մէկ կողմն ամբողջ երկարութեամբ պատուած էր: Բայց ես չկարողացաց երկար նայել ու համոզուել, որովհետեւ մայրս նկատելով, որ ես սենեակում մի բան եմ փնտուամ, իսկոյն գնաց և պատուհանը վարագուրով ծածկեց:

Դուք կարող եք երեակայել, թէ որչափ երկար էր երեում ինձ այդ գիշերը. հէնց որ աչքերս փակում էի, իսկոյն պատկերանում էր իմ առաջ հօրս ոտքը. գնդակներով վիրաւորուած և այնքան շատ ուռած, որ բժիշկը ըստիպուած է եղել անդրավարտիքը պատ-

ռել, հօրս ոտքը միջից հանելու համար վերջապէս գիշերը լուսացրի, բայց առաւոտն էլ ինձ հանգստութիւն չբերեց Ամեն օր հօրս դրութիւնն աւելի վատանում էր. խեղճ հիւանդն էլ համբերութիւն չունէր տանելու իւր ցաւերը: Մարս էլ լաւ չէր կարող ծածկել իւր անհանգստութիւնը: Երեխաները շարունակ լալիս էին, իրանք էլ չհասկանալով, թէ ինչո՞ւ համար: Բժիշկը համարեած մեն ժամ հանդիպում էր հօրս: Ես չէի ուզում փողոց դուրս գալ, որովհետև ամեն պատահող ինձ հարցնում էր հօրս մասին. իսկ այդ հարցերն ինձ շատ ցաւ էին պատճառում: Ես փակուեցի իմ սենեակումս, պատճառ բերելով, թէ արձակուրդներին ինձ գործ են տուել, պէտք է պարապեմ: Բայց իսկապէս ես չէի աշխատում. աչքերս միշտ արտասուքով լիքն էին. այն միտքը, որ գուցէ ես եմ հօրս հիւանդութեան պատճառը, գլխիցս դուրս չէր գալիս և ինձ տանջում էր:

6369



Երկու շաբաթ յետոյ, մէկ առաւօտ,
ժամը 12-ին, ես պատուհանից տեսայ
մեր բժշկին. այս անգամ նա մենակ չէր.
նորա հետ էլի երեք բժիշկներ կային:
նոքա միասին մտան հօրս սենեակը և
մի քառորդ ժամից յետոյ դուրս եկան
դահլիճը: Մասձելով, որ նոքա անպատ-
ճառ խորհուրդ կ'անեն հօրս հիւանդու-
թեան մասին, ես վճռեցի ականջ գնել
նոցա: 'Իհարկ է, ես երեք այդպիսի
վատ բան չէի անի, եթէ որ անպատճառ
չուզենալի իմանալ, թէ արդեօք մեղա-
ւորն ես եմ և արդեօք հայրս վտանգա-
ւոր հիւանդ է, թէ չէ: Ինչ որ բժիշկ-
ները խօսում էին, ես բոլորը պարզ ջո-
կել չէի կարող, բայց այն, ինչ որ իմա-
ցայ, տասը խօսքից հինգը, այդքանիցն
էլ իմ մազերս բիզ բիզ եղան: Իմ հըա-
ցանիս գնդակն էր հօրս հիւանդու-
թեան պատճառը. կասկած չկար: Թէ
ինչ կերպ էր փոքրիկ գնդակը վնասել
ոտքին, այդ արդէն ես չկարողացաւ հտո-

կանալ, որովհետեւ նոքա լատիներէն ա-
նուններ էին տալիս: Բոլորը համաձայն
էին, որ վտանգաւոր ցաւ է, թէ պէտք
է «օպերացիա» անել. բայց նոցանից ոչ
մէկը չէր վճռվում ինքն անել: Նատ թե-
թև անզգուշութիւնից հիւանդը կարող
էր վնասուել, իսկ լաւ օպերացիա անելն
էլ շատ դժուար էր և այնքան ցաւ կա-
րող էր պատճառել հիւանդին, որ առանց
այն էլ երկու շաբաթուայ տանջանքնե-
րից յետոյ թուլացած, նա կարող էր հէնց
օպերացիալի ժամանակ մեռնել: Բժիշկնե-
րից մէկը մի քանի անգամ կրկնեց: Ես
աւելի շուտ կըհամաձայնեմ տասը մեծ
գնդակ հանել և գիտեմ, որ գործը յա-
ջող կըվերջացնեմ, քան թէ կըփնտռեմ
այդ շատ փոքրիկ գնդակը: Միայն մեր
բժիշկը չէր հրաժարվում հօրս օգնել և
ասում էր, որ գիտենալով նորա քաջու-
թիւնն ու ամուր կազմուածք ունենալը,
ինքը համոզուած է, որ հայրս կըդիմա-
նալ ալդ ցաւին: «Եթէ դուք վախենում

Էք, ասում էր նա միւսներին, այն ժամանակ ես կը գտնեմ աւելի քաջին և կը հասնեմ իմ նպատակիս, հիւանդիս կը փըրկեմ։ Այդ խօսքերից յետոյ նոքա ընդհանուր խօսակցութիւն ունեցան, որ ես բոլորվին չեի կարող հասկանալ. Բոլորը միանգամից խօսում էին։ Յետոյ լուեց դռների բացուելն ու խփուելը և շուտով դահլիճում լուութիւն տիրեց։

Մեր բժիշկն այդ օրն էլ չեկաւ. Երեխ նա դնացել էր հարեան քաղաքից բժիշկ բերելու։ Իմ կարծիքս աւելի հաստատուեց, երբ միւս օրն առաւօտուայ ժամը 6-ին մայրս մեզ անկսղիններիցս հանեց, պատուիրեց շուտով հագնուել և տարաւ հօրս մօտ։ Նա մեզ ամեն մէկիս առանձին կերպով ջերմ համբուրեց. յետոյ մայրս նստեցրեց մեզ մեր փոքրիկ կառքի մէջ և երեխաներին ինձ լանձնելով, ասաց. «Հօրեղբայրդ իւր տօնի պատճառով ձեզ հրաւիրել է երկու երեք օրով. ման գալն ու տեղի փոփոխութիւնը

ձեզ շատ հարկաւոր է, մանաւանդ քեզ համար. վերջին ժամանակս դու իսկ բանտարկուածի պէս էիր ապրում։ Հօրդ առողջութեան համար անհանգիստ մի լինիր. այսօրուանից նա կըսկսէ լաւանալ։

Մայրս ինձ խղճալով, խաբիսբում էր. Օպերացիէն անպատճառ պէտք էր, ես այդ հասկացայ և ալդ սկատճառով էլ մեզ տանից հեռացնում էին։ Հօրեղբօրս երեխ իմաց չեին տուել, որովհետեւ նա շատ զարմացաւ, երբ մեզ տեսաւ։ Նոքա շտապում են, մտածեցի ես, երեխ օպերացիէն հէնց այսօր կ'անեն։ Իմ տեղս այնտեղ է... հալրիկիս մօտը, առացի ես մտքումս. և ոչ ոքի իմաց չտալով, ոտքով ճանապարհ ընկալ դէպի տուն։ Երեք ժամից յետոյ ես արդէն տանն էի։

Տուն գնալիս շատ տխուր բաներ էին անցնում իմ մտքիցս. Բացի այն, որ խիղճս ինձ տանջում էր, ես վախենում էի և ապագալի համար... Ես այդ երկու շաբաթում այնքան ցաւ քաշեցի, ինչքան

ու ուրիշը տասն տարում չե քաշի: Ես
գիտէի որ մենք հարուստ չենք. ի՞նչ
կըլինի մեր դրութիւնն, եթէ հայրս մեռ-
նի... իսկ եթէ հարկաւոր լինի մեր կա-
լուածքը ծախելու... ես պարտական եմ
պահելու մեր ընտանիքը. բայց ի՞նչքան
կարող եմ փող աշխատել որ. ես միայն
երրորդ դաստան աշակերտ եմ: Այն ժա-
մանակ ուսումս պէտք է կիսատ թողնեմ.
ես տեսել եմ իմ հասակիս տղաներ, ո-
րոնք նոյնպէս իրանց ուսումը կիսատ են
թողել, որ ընտանիքի համար հաց ճա-
րեն. մէկ տարուայ մէջ նոքա արհեստ
են սովորում և կարողանում են դորա-
նով քիչ թէ շատ գլուխները պահել:

Մարդու չհանդիպելու համար ես
անցնում էի խուլ փողոցներով ու հա-
յաթների միջով: Դետից անցալ միւսափը,
լաւ որ, գետը ցածը էր. ես ուղղակի
դուրս եկալ մեր պարտիզին նայող
պատուհանների տակ: Ես միայն տա-
ռը քայլ հեռու էի մերոնցից, երբ յան-

կարծ մի սուր ու խղճալի ձայն լսեցի...
որից իմ ոտքերս ծալուեցին: Այն ժամա-
նակներն օպէրացիա տնելիս գործ չէին
դնում ոչ խօրօֆօրմ և ոչ էլ ուրիշ բան,
որ հիւանդին քնեցնեն և խեղճ հիւանդը
պէտք է լսէլ ու տեսնէր այն ամէնն,
ինչ որ անում էին իրան: Սրդեօք եր-
կամը տանջուեց հայրս, այդ ես չդիտեմ.
միայն երբ զարթնեցի, տեսալ որ գետ-
նին պառկած եմ. երեխ ուշքս գնացել
էր: Ել ձալն չէր լսվում: Ի՞նչպէս վեր-
ջացաւ. արդեօք հայրս դիմացաւ» ա-
մենից առաջ այդ հարցերը տուի ես ինձ
ու ինձ. և ոչ մեռած, ոչ կենդանի, ներս
մտայ տուն և հենց նոր գահլիճ էի մը-
տել, երբ հանդիպեցի մօրս:

Մայրիկ ջան, ինչպէս եղաւ...
Հանգստացիր, այդ անկարելի էր
չանել, իսկ ապագայի համար բժիշկը պա-
տասխանատու է:

Միայն այդ ժամանակ մայրս զլիսի
ընկաւ, որ ես պէտք է հօրեղբօրս մօտ

լինէի: Նա բարկացաւ, որ ես չեմ լսում իրան և սարսափեց, երբ նկատեց, որ իմ նոր շորս բոլորպվին թրջուած և ցեխոտուած էր...

Մեր հիւանդն այդ ժամանակ քնած էր: Նորան չասացին իմ վերադառնալուո մասին. նա կարող էր նեղանալ, որովհետեւ նորա կամքովն էին մեզ զըկել հօրեղբօրս մօտ: Բայց մայրս սովոր չէր հօրեցս բան ծածկելու. և բացի այդ նա ուզում էր, որ ես հալրիկիս տեսնեմ և ուրախանամ, որովհետեւ նա հիմայ աւելի ուրախ և աւելի զուարթ էր... Այդ պատճառով մենք երկուսս էլ երջանիկ էինք. ես ներս մտայ հօրս սենեակը, նա ինձ տեսաւ թէ չէ, ուրախութիւնից սկսեց լալ:

Հալրիկ ջան, սիրելի հալրիկո, ասացի ես նորան փայփալելով, ինչու դու ինձ ճշմարիտը չասացիր... չէ որ ես սովոր եմ հաւատալ ամեն բանի, ինչ որ դու ինձ ասում ես...,

Եւ սորանից յետոյ էլ հաւատա: Ես գիտէի, որ դու շատ կըտխըես, եթէ ճշմարտութիւնն իմանաս: Մտածում էի, դժբախտութիւնը պատահել է, էլ ուղղել չի կարելի. ուրեմն, ինչու դու էլ ամբողջ կեանքդ տանջուիս...

Մի և նոյն է, ես այս երբէք չեմ մոռանայ և գիտեմ, որ երբէք էլ չեմ միիթարուի, որ այսպիսի անսերելի բան արի:

Սպասէ, ես քեզ կըմխիթարեմ. այսուհետև դու ինձ մօտ կըմնաս և կը նայես ինձ, քանի որ ես անիողնումս պառկած կըլինեմ: Խեղճ տղալ, դու էլ բաւական տանջուեցիր...

Այդ օրուանից մենք աւելի մտերմացանք հօրս հետ և դառանք ինչպէս ընկերներ. Հալրիկս ինձ համար աւելի թանգ էր քան առաջ: Այդ տխուը դէպէն ինձ սովորեցրեց, թէ ո՛րչափ մարդուս հարկաւոր է համբերութիւն և սառնասըտութիւն: Հօրս քաջութիւնն ու բա-

ըութիւնն ինձ լաւ օրինակ դառան. նո-
րան նայելով, ես էլ աւելի խելսք և ա-
ւելի լաւ էի դառնում:

Մէկ երեկոյ, երբ ես տիսուր նստոծ
էի նորա գլխի վերևը, նա խօսեց ինձ հետ:
«Լսէ, ասաց նա. մենք երկուս էլ
լիմար ենք: Դու դեռ ջահիլ ես, քեզ նե-
րելի է. բայց ես պէտք է ամեն բան ա-
ռաջուց լաւ մտածած լինէի. ինչպէս
վարժապետ և հայր ես երկու անգամ
աւելի մեղաւոր եմ: Ես պէտք է քեզ
հետ մնայի, ցոյց տայի, թէ երբ ինչ
պէտք էր անել, և ոչ թէ թողնէի,
որ դու ինքդ ճագարին սպանէիր... Դէհ,
ինչ արած, եղածն օրհնած է. երբ միւս
տարի միասին գնանք որսի...

Որսի, երբէք, ասացի ես յուզուած.
Երբէք հրացան էլ ձեռքս չեմ առնի:

Հայրս ծիծաղեց ու ասաց. Ոչ, մենք
կ'երթանք որսի. ես ալդ ուզում եմ. հրա-
ցան արձակել գիտնալը շատ լաւ բան է,

մանաւանդ որ որսի ժամանակ մարդ
համբերութիւն է սովորում:

Մայրս էլ հակառակ էր հօրս: Յե-
տոյ, երբ հայրս լաւացաւ և մենք միա-
սին գնում էինք որսի, խեղճ մայրս ա-
մեն անգամ սաստիկ անհանգիստ էր լի.
նում: Բայց նա շատ լաւ գիտէր, որ հօրս
ցանկութիւնն տնպատճառ պէտք է կա-
տարուի: Եթէ անկարելի է, որ այդ չա-
նէք, այն ժամանակ, ասաց մայրս, պէտք
է մի միջոց գտնել, որ տղաս իրան խե-
լօք ու լաւ պահէ որսի ժամանակ: Ես
քեզ կուտամ մի լիշտակ և դու նորան
միշտ քեզ մօտ պահէ. նա քեզ կըլիշեց-
նէ, որ գու որսի ժամանակ չպէտք է
տաքանաս ու գլուխդ կորցնես»:

Ալդ լիշտակն ահա ալս քորոցն
է. սորա գլուխը շինուած է այն փոքրիկ
գնդակից, որով քիչ մնաց, որ հօրս սպա-
նէի: Ալս քսրոցը միշտ փողակապիս վե-
րալ է: Այն լիշտակնը, որը կապուած
է սորա հետ, ինձ ստիպեց հանգիստ և

4467

— 28 —

մտածող լինել, մինչև որ այդ թանգա-
գին յատկութիւններն ինձ համար սովո-
րութիւն դարձան:



2013

Նոյն թարգմանչինն է

	Ո.	Կ.
1 Յովհան Գուտտելնբերգ . . .	—	15
2 Դոկտօր Ջ.Էններ . . .	—	20
3 Մանկական Թատրօն . . .	—	1 —
4 Իբսէնի, Նօրա	—	30
5 Լիլ Արքայ	—	5
6 Դայլ	—	3
7 Թուղթ և Հին Գրքեր (Օստրօ- գօմսկի)	—	5
8 Տիրոլացի Աղջեկ և Ժլատ . .	—	5
9 Մեր Պապի Գաւազանը . . .	—	5
10 Անհանգիստ Գիշեր . . .	—	5

